

Հուլիսի 7-ը՝ Հայաստանի Ազգային գրադարանի օր

Հուլիսի 7-ին Հայաստանի ազգային գրադարանի դահլիճում տեղի ունեցավ Ազգային գրադարանի օրվան նվիրված միջոցառում: Բացման խոսքով հանդես եկավ ՀԱԳ-ի տնօեն Տիգրան Զարգարյանը շնորհավորեց աշխատակիցներին գրադարանի օրվա կապակցությամբ: Ելույթներով հանդես եկան և գրադարանի աշխատակիցներին ողջունեցին Գիտության և Մշակույթի ռուսական կենտրոնի ներկայացուցիչ Իրինա Ֆեոդորովնա Կասագկայան, գրող, հրապարակախոս Աբգար Ափինյանը, Արտաշես Ղազարյանը: Երաժշտական կատարումներով և ասմունքով հանդես եկան Սոֆի Դեվոյանի պարի և հոգու թատրոնի սաներ Աիդա Գևորգյանը, Էդիտա Ղազարյանը, Թագուհի Ղազարյանը, Արաքսյա Լազարյանը: Հայաստանի Ազգային գրադարան ՊՈԱԿ-ի պատվոգրերով պարգևատրվեցին 20, 30, 40, 45 տարվա աշխատանքային գործունեության հորելյանական տարեդարձ ունեցող աշխատակիցներից Լիլիթ Գալստյանը, Ջուլիետա Մանուչարյանը Սրբուհի Կիզիրյանը Նաիրա Սարգսյանը, Քնարիկ Կարապետյանը, Մարինե Սարգսյանը, Կարինե Գրիգորյանը, Հասմիկը Գրիգորյանը, Կարինե Մինասյանը, Հասմիկ Գասպարյանը: